ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

հաստատել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկը՝ համաձայն հավելվածի:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ **Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆ**

2025 թվական, հոկտեմբերի 20
Երևան
ԱԺԽՈ-054-Լ

ՀԱՎԵԼՎԱԾ
Ազգային ժողովի խորհրդի
2025 թվականի հոկտեմբերի 20-ի
Ն ԱԺԽՈ-054-Լ որոշման

Ժամկետացանկ

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու

1. Երկուշաբթի, 27 հոկտեմբերի 2025թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկում.
- օրենքի նախագծի մշակման սկզբունքները և նախագծի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (գնաճի սցենարը, բյուջեի դեֆիցիտը և նրա ծածկույթը, արտաքին և ներքին պարտքը),
- եկամուտների ձևավորում (հարկային և մաքսային քաղաքականությունը),
- բյուջեի ծախսերի կառուցվածքը և ծախսային քաղաքականությունը (սոցիալական հարցերի լուծումը բյուջեում և դոտացիաներ համայնքներին),
- բյուջեի կատարման համար անհրաժեշտ օրենսդրական ապահովումը.
2. «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ ֆինանսների նախարարություն.
3. «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կենտրոնական բանկի եզրակացության քննարկում.
4. Կենտրոնական բանկի 2026թ. վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նախագծի քննարկում:
5. «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ Հաշվեքննիչ պալատ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյան

Հրավիրվում են՝ *ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը*
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը
Վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանը

2. Երկուշաբթի, 27 հոկտեմբերի 2025թ., ժ.13:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արտաքին գործերի նախարարություն, միջազգային կազմակերպություններին անդամակցելու վճարումներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյան

3. Երկուշաբթի, 27 հոկտեմբերի 2025թ., ժ.15:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրոպական ինտեգրում:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյան

Հրավիրվում է՝ Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյան

4. Երկուշաբթի, 27 հոկտեմբերի 2025թ., ժ.17:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրասիական տնտեսական միություն և տարածաշրջանի մյուս երկրների հետ կապեր:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյան
Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյան

5. Երեքշաբթի, 28 հոկտեմբերի 2025թ., ժ.10:30, 330 դահլիճ
Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտների ձևավորում, հարկային և մաքսային քաղաքականություն:

2. «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արդյունաբերություն, էներգետիկա և բնական պաշարներ, տրանսպորտ, կապ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հանրային ծառայությունների կարգավորում, մրցակցության պաշտպանություն, քաղաքաշինություն և անշարժ գույքի կադաստրի ոլորտ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Էդուարդ Հակոբյան
Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Դավիթ Խուդաթյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարար Մխիթար Հայրապետյան
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
նախագահ Մեսրոպ Մեսրոպյան
Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության
հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյան
Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյան
Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյան

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը*

6. Չորեքշաբթի, 29 հոկտեմբերի 2025թ., ժ.10:00, 330 դահլիճ
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ իշխանության պետական և դատական մարմիններ, պետական վերահսկողություն և կոռուպցիայի կանխարգելում:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյան
Հանրապետության նախագահի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ Խաչատուր Պողոսյան
Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար - գլխավոր
քարտուղար Դավիթ Առաքելյան
Սահմանադրական դատարանի աշխատակազմի
ղեկավար Արմեն Հարությունյան
Բարձրագույն դատական խորհուրդ՝ Դատական դեպարտամենտի
ղեկավար Նաիրի Գալստյան
Արդարադատության նախարար Սրբուհի Գալյան
ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար Միեր Ափրիկյան
Պետական վերահսկողական ծառայության
ղեկավարի պարտականությունները կատարող Ռոբերտ Բազիկյան
Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյան
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյան
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
նախագահ Վահագն Հովակիմյան

Հրավիրվում են՝ *Կառավարությանը ենթակա՝ տեսչական մարմինների ղեկավարները*

7. Չորեքշաբթի, 29 հոկտեմբերի 2025թ., ժ.17:00, 330 դահլիճ
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյան

8. Հինգշաբթի, 30 հոկտեմբերի 2025թ., ժ. 13:30, 330 դահլիճ
Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ սոցիալական ապահովություն, նպաստներ և թոշակներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյան

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը*

9. Հինգշաբթի, 30 հոկտեմբերի 2025թ., ժ. 16:00, 330 դահլիճ
Ազգային ժողովի առողջապահության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ առողջապահություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը*

10. Ուրբաթ, 31 հոկտեմբերի 2025թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ տարածքային կառավարում, բնապահպանություն/շրջակա միջավայր, ջրային տնտեսություն, դոտացիաներ համայնքներին և պատվիրակված լիազորությունների իրականացում:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Դավիթ Խուդաթյան
Երևանի քաղաքապետ և մարզպետներ

11.1. Երկուշաբթի, 03 նոյեմբեր 2025թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ ներքին գործեր:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյան

11.2. Երկուշաբթի, 03 նոյեմբեր 2025թ., ժ.12:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ (նիստը դռնփակ է)

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ պաշտպանություն, ազգային անվտանգության ծառայություն, պետական պահպանության ծառայություն, արտաքին հետախուզության ծառայություն, պետական ռեզերվներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյան
Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյան
Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Անդրանիկ Սիմոնյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար
Մխիթար Հայրապետյան
Արտաքին հետախուզության ծառայության պետ
Քրիստիննե Գրիգորյան
Պետական պահպանության ծառայության պետ Արթուր Գասպարյան

12. Երեքշաբթի, 04 նոյեմբեր 2025թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ գիտություն, կրթություն, մշակույթ, սպորտ, սփյուռք, երիտասարդություն և տեղեկատվություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյան
Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Վասակ Դարբինյան
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյան

Հրավիրվում են՝ *ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը*
Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը

13. Երեքշաբթի, 04 նոյեմբեր 2025թ., ժ.15:30, 334 դահլիճ
Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ գյուղատնտեսություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան
Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյան

14. Մինչև 2025 թվականի նոյեմբերի 6-ը՝ ժամը 18:00-ն.

1. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումների ամփոփում:
2. Ազգային ժողովի պատգամավորները և խմբակցությունները «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները ներկայացնում են ԱԺ աշխատակազմ:

15. Մինչև 2025 թվականի նոյեմբերի 7-ը՝ ժամը 15:00-ն

Ազգային ժողովի աշխատակազմը՝ ԱԺ մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումների արդյունքում ստացած գրավոր առաջարկները ներկայացնում է Կառավարություն:

16. Երեքշաբթի, 2025 թվականի նոյեմբերի 11-ին.

«Հայաստանի Հանրապետության 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը ընդգրկվում է Ազգային ժողովի ութերորդ գումարման տասներորդ նստաշրջանի նոյեմբերի 11-ին գումարվող հերթական նիստերի օրակարգում:

Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ,
Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Է. Խանզրադյան